

«ԴԻԼԻՉԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ
31 դեկտեմբեր 2022թ.

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

07.06.2023

N 022305



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բլյուր Թրեյդ Արմենիա» ՓԲԸ

Փյունիկոս տնօրեն

Վ. Գևորգյան

Առաջատարական ծառայությունների իրականացման լիցենզիա թիվ 054՝
տրված ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջանի կենտրոնական դպրոց»

Կրթական Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Դիլիջանի կենտրոնական դպրոց» Կրթական Հիմնադրամի (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի որ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան ուղիտորական ընթացակարգեր, բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Կազմակերպությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Պոնոմարևա

07.06.2023թ.



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծանոթա գրություն	(հազար դրամ)	
		2022թ.	2021թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	3,103	2,421
Ոչ նյութական ակտիվներ	9	507	699
Հետաձգված հարկային ակտիվներ	10	714	662
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		4,324	3,782
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		829	916
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	5,027	1,169
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		1,254	9,390
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		7,110	11,475
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		11,434	15,257
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կուտակված վնաս		(4,222)	(3,974)
Ընդամենը սեփական կապիտալ		(4,222)	(3,974)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		95	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		95	-
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ		1,215	780
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	7,360	11,097
Պայմանագրային պարտավորություններ	13	6,986	7,354
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		15,561	19,231
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		15,656	19,231
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		11,434	15,257

Նաիրա Դալուզյան

Գործադիր տնօրեն

07.06.2023թ.

Մելինե Ղարաբեշյան

Գլխավոր հաշվապահ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ՝ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություն	(հազար դրամ)	
		2022թ.	2021թ.
Հասույթ	5	150,478	145,232
Այլ եկամուտներ		306	184
		<u>150,784</u>	<u>145,416</u>
Հատուցումներ աշխատակիցներին		(138,637)	(137,035)
Այլ ծախսեր	6	(12,596)	(9,071)
Գործառնական գործունեությունից վնաս		<u>(449)</u>	<u>(690)</u>
Տոկոսային եկամուտ		214	135
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից		<u>(1)</u>	<u>(1)</u>
Վնաս մինչև հարկումը		<u>(236)</u>	<u>(556)</u>
Շահութահարկի գծով ծախս	7	(12)	(59)
Տարվա վնաս		<u>(248)</u>	<u>(615)</u>
Համապարփակ ֆինանսական արդյունք		<u>(248)</u>	<u>(615)</u>

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	(հազար դրամ)	
	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվար 2021թ.	(3,359)	(3,359)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք Տարվա վնաս	(615)	(615)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	(615)	(615)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2021թ	(3,974)	(3,974)
Տարվա վնաս	(248)	(248)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	(248)	(248)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ	(4,222)	(4,222)

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	(հազար դրամ)	
	2022թ.	2021թ.
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Տարվա շահույթ	(248)	(615)
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,117	1,133
Հիմնական միջոցների օտարման ծախս	16	1,149
Ֆինանսական եկամուտ	(214)	(135)
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտի ճանաչում	(5)	(9)
Շահութահարկի գծով ծախս	12	59
<i>Դրամական միջոցների հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</i>	<i>678</i>	<i>1,582</i>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր՝ աճ/(նվազում)	(3,858)	(213)
Պաշարներ՝ աճ/(նվազում)	86	43
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր՝ աճ/(նվազում)	(3,737)	1,289
Պայմանագրային պարտավորություններ՝ աճ/(նվազում)	(368)	300
Եկամուտներին վերաբերող շնորհներ՝ աճ/(նվազում)	435	40
<i>Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) դրամական միջոցներ</i>	<i>(6,764)</i>	<i>3,041</i>
Վճարված շահութահարկ	(64)	-
<i>Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<i>(6,828)</i>	<i>3,041</i>
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Ստացված տոկոսային եկամուտ	214	135
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,523)	(2,029)
<i>Ներդրումային գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<i>(1,309)</i>	<i>(1,894)</i>
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Փոխառություններից մուտքեր	-	-
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված/(օգտագործված) դրամական միջոցներ</i>	<i>-</i>	<i>-</i>
Բանկային հաշիվներում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(8,137)	1,147
Բանկային հաշիվների մնացորդները տարեկգրի դրությամբ	9,391	8,244
<i>Բանկային հաշիվների մնացորդները տարեկգրի դրությամբ</i>	<i>1,254</i>	<i>9,391</i>